Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գրիգոր Գույանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Հանրային ծառայողի անունը, ազգանունը.**
Լիանա Ղահրամանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Հյուսիսային Մակեդոնիա (Օհրիդ)՝ 2023 թվականի ապրիլի 25-ից մինչև ապրիլի 29-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
ՄԱԿ-ի Օզոնի քարտուղարություն (Ozone Secretariat)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
Մասնակցություն Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի օզոնային տարածաշրջանային ցանցի տարեկան հանդիպմանը Հայաստանի Հանրապետության ներգրավվածությունն ապահովելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   1. Մոնրեալի արձանագրության Կիգալիի փոփոխության իրականացման ծրագրերի մշակում և դրանց ենթատեքստում՝ էներգաարդյունավետության հարցեր:
   2. Բնական սառնագենտների օգտագործմամբ հովացման նոր տեխնոլոգիաները և ընդլայնված կրթության անհրաժեշտությունը:
   3. Ածխաջրածինների և այլ բնական սառնագենտների վերաբերյալ դասընթացների կազմակերպման ուղիները:
   4. Կարգավորվող նյութեր պարունակող սարքավորումների գույքագրման համակարգի ներդրում և գործարկում. Բոսնիա և Հերցեգովինայի փորձը:
   5. Կարգավորվող նյութերի վերականգնման և օգտահանման ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության տեսլականը:
   6. Մոնրեալի արձանագրության Գործադիր կոմիտեի 91-րդ նիստում ընդունված որոշումների ակնարկ:

7. Մոնրեալի արձանագրության Կողմերի հանդիպման որոշումների և Մոնրեալի արձանագրության Կողմերի բաց աշխատանքային խմբի առաջիկա քառասունիինգերորդ հանդիպմանը բարձրացվող հարցերի ակնարկ:
8. Մոնրեալի արձանագրությամբ կարգավորվող նյութերի և դրանք պարունակող սարքավորումների ստուգում և հսկողություն:
9. Քվոտաների բաշխում մետրիկ տոննայի կամ CO2-ի համարժեք տոննայի հիման, անցյալ քվոտայի կամ փաստացի ներմուծման հիման վրա:

**7. Հանդիպումները, ելույթները.**

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի օզոնային տարածաշրջանային ցանցի տարեկան հանդիպման շրջանակներում իմ կողմից նախաձեռնվել են հետևյալ երկկողմ հանդիպումները.

- Բոսնիայի և Հերցեգովինայի ներկայացուցիչ տիկին Րոգովիչ-Գրուբիչի հետ՝ կապված Բոսնիա և Հերցեգովինայում մշակված, սակայն դեռևս չներդրված կարգավորվող նյութեր պարունակող սարքավորումների գույքագրման համակարգի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել է տվյալ համակարգի մշակման համար օգտագործված ֆինանսավորման աղբյուրները և իրականացնող գործակալության ընտրության հարցերը:
- Օզոնի քարտուղարության ներկայացուցիչ պարոն Մուտիսիայի հետ՝ կապված հիդրոֆտորածխածինների 2022 թվականի սպառման տվյալների ներկայացման և հիդրոֆտորածխածինների հիմնամակարդակի որոշման և անհրաժեշտության դեպքում վերջինի փոփոխության հետ:
- Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի օզոնային տարածաշրջանային ցանցի համակարգող պարոն Քոփենի հետ՝ 91-րդ Գործադիր կոմիտեի առաջիկա նիստին քննարկվող հարցերի շուրջ տարածաշրջանի դիրքորոշում ձևավորելու մեխանիզմները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանն է ընտրվել տարածաշրջանի կողմից այն Գործադիր կոմիտեի 2023 թվականին կայանալիք նիստերում ներկայացնելու նպատակով:
- Չեխիայի ներկայացուցիչ տիկին Մասիչկովայի հետ կարգավորվող նյութերի օգտահանման Չեխիայի փորձը քննարկելու նպատակով:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

- Բոսնիայի և Հերցեգովինայի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել կարգավորվող նյութեր պարունակող սարքավորումների գույքագրման համակարգի նկարագիրը Հայաստանին տրամադրելու վերաբերյալ:
- Օզոնի քարտուղարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել անհրաժեշտության դեպքում հիդրոֆտորածխածինների հիմնամակարդակի վերանայման մասին:
- Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի օզոնային տարածաշրջանային ցանցի համակարգողի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել մայիսի վերջին

տարածաշրջանային ցանցի Մոնրեալի արձանագրության ազգային համակարգողների հետ վիրտուալ քննարկում կազմակերպելու մասին:

- Չեխիայի ներկայացուցչի հետ քննարկելու կարգավորվող նյութերի օգտահանմանն ուղղված հնարավոր համագործակցության եզրերը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ դիտարկումները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Առաջարկում եմ կարգավորվող նյութեր պարունակող սարքավորումների գույքագրման համակարգի մշակման Բոսնիայի և Հերցեգովինայի փորձը պատշաճ կերպով ուսումնասիրելուց հետո քննարկել Չեխիայի հետ նմանատիպ համակարգի մշակման և կարգավորվող նյութերի օգտահանման համատեղ ծրագրի հնարավորությունները:

*Գործուղվող* *Լիանա Ղահրամանյան*

*08.05.2023թ.*